

Ա Ղ Ա Ւ Ն Ի

ԺԸ

Սակայն Աղաւնի Օրսոյի երթալէն քիչ վերջը իմացեր էր լրտեսներէն որ Պարրիչինները դուրս գացեր էին. ան վայրկենէն խռովեցաւ, տան մէջ վեր վար կը քալէր, մէյ մը խոհանոցը՝ մէյ մը հիւրերուն համար պատրաստուած սեւ նեակները կ'երթար, առանց բան մը ընելու. մերթ րնդ մերթ ալ կանկ կ'առնէր նայելու թէ արդեօք անսովոր աղաղակ մը կը լսէ գեղին մէջ։ Տասնըմէկին ատենները ձիաւորներ մտան Բիէդրանէրա. անգղիացի հազարապետն էր, իր աղջիկը, ծառաներն ու առաջնորդներն։ Աղաւնիի առաջին խօսքն ան եղաւ թէ Եղբայրս տեսա՞ք։ Ետքը առաջնորդին հարցուց ինչ ուղղութիւն բռնելին և թէ որ ժամուն ճամբայ ելեր էին. և անոր պատասխաններէն իմացաւ որ պէտք էր իրարու հանդիպած ըլլային։

— Թերեւս եղբայրդ վերէն գացած ըլլայ, ըսաւ առաջնորդը. մենք վարէն եկանք։

Բայց Աղաւնի գլուխը շարժեց և հարցմունք հարցմունքի վրայ ըրաւ։ Բնութեամբ ինքզինքը բռնել գիտէր, մանաւանդ որ չէր ալ ուզէր հիւրերուն գուշակել տալ իր վրդովմունքը. հանդերձ այսու իր այլայլութիւնն յաղթեց, և բռնադատուեցաւ հաղորդելու զայն հազարապետին ու անոր աղջկանը՝ պատմելով հաշտութեան ընդունայն փորձն որ չարագոյն վախճան ունեցեր էր։ Նէվիլ օրիորդը խռովեցաւ, և կ'ուզէր որ ամեն կողմ մարդ զրկուի. հայրն ալ կ'ուզէր նորէն ձի հեծնալ ու առաջնորդին հետ երթալ Օրսոն փնտռելու։ Վերջապէս Աղաւնի մտածեց իր տանտիկնութեան պարտքն ընելու. ջանաց որ ժպտի, վրայ տուաւ հազարապետին որ սեղան նստի, և եղբօրն ուշանալուն տեսակ տեսակ պատճառներ կը բերէր, զորոնք ինքն իսկ ետքը հաւանական

չէր սեպեր։ Հազարապետը մտածելով որ իր պարտքն էր կանանց սիրտ տալու, ասանկ մեկնեց Օրսոյի հեռաւորութիւնը։

— Ես խօսք կու տամ որ տէլլա Ռէպպիա ճամբան վայրի որսի հանդիպած է. և անտարակոյս չկրնալով փորձութեանն յաղթել, կը տեսնէք որ մախաղը լեցուն պիտի դառնայ։ Ճամբան չլսեցինք չորս հրացանի հարուած. երկուքը աւելի սաստիկ լուեցան, և ես անատեն դարձայ ըսի աղջկանս. Գիտնաս որ տէլլա Ռէպպիան որսի ելեր է. իմ հրացանս միայն ասանկ սաստիկ ձայն կրնայ հանել։

Աղաւնիի գոյնը նետեց, և Լիւդիա՝ իմացաւ մէկէն ինչ կասկած ձգեցին օրիորդին մտքին մէջ հազարապետին խօսքերը։ Քանի մը վայրկեան լուրթեւնէ ետքը՝ Աղաւնի հարցուց թէ արդեօք երկու սաստկաձայն հարուածները առաջ նետուեր էին չէ նէ վերջը. բայց ոչ հազարապետը, ոչ իր աղջիկն և ոչ առաջնորդը ուշադրութիւն ըրեր էին այս հական կտորին։

Մինչև ժամը մէկ Աղաւնիի զրկած մարդիկներէն մէկն ալ չդարձաւ. ան ատեն իր բոլոր կտրուածութիւնը ձեռք առած՝ բռնադատեց հիւրերը կերակրոյ նստելու. սակայն բաց՝ի հազարապետէն մէկալոնք չկրցան ուտել։ Հրապարակին մէջ պզտի ձայն մը լսուածին պէս՝ Աղաւնի պատուհանը կը վազէր, ետքը կու գար տրտում տխուր նորէն կը նստէր, և մեծագոյն տրտմութեամբ կը ջանար խօսակցելու իր հիւրոց հետ. աննշան խօսակցութիւն մը, որուն խօսողներն ու լսողները ուշադրութիւն չէին ըներ, և որ ստէպ կ'ընդհատէր երկայն լուրթեամբ։

Յանկարծ ձիու մը վազուածքի ձայնը լսուեցաւ։ — Այս անտարակոյս եղբայրս է, ըսաւ Աղաւնի վեր ցատքելով. բայց երբոր տեսաւ Քիլինան Օրսոյի ձիուն վրայ հեծած, Եղբայրս մեռեր է՝ աղաղակեց կսկծաղին ձայնիւ։

Հազարապետին ձեռքէն գաւաթը վար ինկաւ, Լիւդիա աղաղակեց, ամենքը

դուռը վազեցին : Դեռ ֆիլինան ժամա-
նակ չունեցած վար իջնալու, Աղանի
փետրոյ մը պէս թևերուն մէջ առաւ
զանիկայ ու խղճելու չափ կը սխմէր .
աղջիկն իմացաւ ինչ կը հարցընէր Ա-
ղանի ահաւոր նայուածքը, և առաջին
խօսքն եղաւ՝ թէ Ողջ է : Աղանի ալ
չսխմեց զանիկայ, և ֆիլինա պզտի կա-
տուի մը արագութեամբ գետին նե-
տուեցաւ :

— Իսկ մէկաշնոնք, հարցուց Աղանի
խորին ձայնով :

Ֆիլինա ինքզինքը խաչակնքեց ցու-
ցամաստովն ու երրորդ մատովը : Մէկէն
Աղանի դէմքին մեռելատիպ տոգու-
նութիւնը վառ կարմրութեան փոխուե-
ցաւ . և մէյ մը Պարրիչինիններուն տան
վրայ կրակէ աչքեր տալէն վերջը, ժրպ-
տելով ըսաւ հիւրերուն . — Ներս եր-
թանք սուրճ խմելու :

Աւազակաց Հիւրիկը պատմելու շատ
բան ունէր, զորոնք Աղանի իտալերէն
կը թարգմանէր, Լիւդիա ալ անգղիա-
րէն : Իրեք լսողներէն Աղանի միայն ան-
ձայն մտիկ կ'ընէր . բայց ձեռքի անձե-
ռոցն անանկ կ'ոլրէր՝ որ պատահաւ պա-
տահ կ'ընէր : Հինգ վեց անգամ ընդհա-
տեց աղջկան պատմութիւնը՝ կրկին և
կրկին լսելու համար թէ Պրանտոլաչիոյ
ըսած էր որ Օրսոյի վէրքը վտանգաւոր
չէր և թէ անանկ վէրքեր շատ տեսեր
էր : Ֆիլինա պատմութիւնը լմնցընե-
լէն ետքը՝ զուրցեց որ Օրսոյ գրելու
թուղթ կ'ուղէր, և կը յանձնէր քրոջը
որ զուրցէ տունն եղած հիւր օրիորդի
մը որ տունէն չերթայ՝ իրմէն նամակ
չառած : Այս խօսքին Աղանի ժպտեցաւ
և անգղիացի օրիորդին ձեռքը սխմեց :

— Այո, պէտք է հետս կենսո, ազ-
նիւ բարեկամահիս, զուրցեց Աղանի
համբուրելով զԼիւդիա, և պէտք է մե-
ղի օգնես :

Ետքը գլորոց մը բացաւ, մէջէն հին
լաթեր հանեց և անոնցմէ փաթթելու
ու գզած լաթ կը պատրաստէր : Իր կրա-
կէ աչքերը, երեսին կենդանութիւնը և
մերթ զբաղեալ ու մերթ պաղարին
կերպը տեսնելով, չէր կրնար դուշա-

կուիլ թէ արդեօք աւելի եղբօրը վէրքին
վրայ վշտացած էր՝ թէ թշնամեաց մա-
հուանը վրայ ուրախացեր էր : Մէյ մը
խահուէ կը լեցընէր հազարապետին և
կը պարծենար իր աղէկ շինելուն վրայ .
մէյ մը աշխատել կու տար Լիւդիոյ ու
ֆիլինայի փաթթելու լաթ կարելու . և
միակերպ կը հարցընէր թէ Օրսոյի վէր-
քը շատ ցաւ կու տար : Երբեմն երբեմն
աշխատելու միջոցը կ'ըսէր հազարապե-
տին . Երկու անանկ կտրիճ, անանկ պա-
տերազմող անձինք . և ինքը մինակ,
վիրաւորուած, մէկ թևով միայն . . . եր-
կուքն ալ գետին փռեր է : Ինչ կտրը-
ճութիւն, հազարապետս . դիւցազն չէ
Օրսոյ : Ա՛հ Լիւդիա, ինչպիսի երջան-
կութիւն է խաղաղ երկրի մը մէջ բնա-
կիւր՝ ինչպէս է ձեր աշխարհը : . . . Ա-
պահով եմ՝ որ դու դեռ չէիր ճանչ-
նար եղբայրս : . . . Բայց ես ըսեր էի . Բա-
ղէն թևերը պիտի տարածէ : . . . Դու ի-
րեն անուշ կերպէն խաբուած էիր : . . .
Խեղճ Օրսոյ :

Լիւդիա լուռ կեցեր էր . իսկ հայրը
կը հարցընէր թէ ինչո՞ւ համար դատա-
ւորաց բողոք չէր ըլլուէր . և կ'ուղէր ի-
մանալ թէ Պրանտոլաչիոյի տունը շատ
հեռու էր Բիէդրանէրայէ, որպէս զի եր-
թայ տեսնէ իր բարեկամը : Աղանի իր
սովորական հանդարտ կերպովը պա-
տասխան տուաւ թէ Օրսոյ անտառն էր,
աւազակներուն մէկը զինքը կը հողար,
և թէ շատ վտանգաւոր էր իր մարդու
երևնալը՝ քանի որ գաւառապետին ու
դատաւորաց միտքն իմացուած չէր . և
ապահովցուց որ ծածուկ՝ ճարտար վի-
րաբոյժ մը կը ղրկէ հիւանդին քովը :
Միայն միտքդ պահէ, պարոն հազարա-
պետ, ըսաւ, որ հրացանի չորս հարուած-
ները լսեր էիր, և ինծի ըսիր ալ որ վեր-
ջին պարպողը Օրսոյ էր : Հազարապե-
տը չհասկըցաւ այս խօսքին վարպետու-
թիւնը :

Իրիկուն ըլլալու վրայ էր երբոր տը-
խուր թափոր մը մտաւ գեղին մէջ : Պար-
րիչինի փաստարանին երկու տղոց դիակ-
ները կը բերէին, իւրաքանչիւրը ջուրոյ
մը վրայ խաչաձև ձգուած : Յուղարկաւու-

րութեան ետեւէն կու գային բազմութիւն կողմնակցաց և պարապորդներու անոնց հետ էին գիւղական պահապանութեան զինուորները՝ որ միշտ ուշ կը հասնին, և գեղապետի օգնականն որ ձեռքերն երկինք կը վերցընէր՝ միակերպ ըսելով. ի՞նչ պիտի ըսէ գաւառապետը: Քանի մը կանայք, որոնց մէջ էր Օւլանտուչիոյի դայեակը, մազերնին կը փետտէին և ոռնալու ձայներով կուլային կ'ողբային: Բայց իրենց աղաղակաւոր հեծութիւնըն այնչափ տպաւորութիւն չէին ընէր՝ որչափ ուրիշ անձի մը լուռ յուսահատութիւնը, որուն վրայ ուղղուած էին ամենուն աչքը: Երկու երիտասարդաց զօրադոհայրն էր, որ մէյ մը մէկ դիակին՝ մէյ մը մէկալին քով երթալով, հողով աղտեղած գլուխնին վեր կը վերցընէր, կապտացած շրթութուններուն համբոյր կու տար, պընդացած մարմինները կը բռնէր՝ իբրեւ թէ երեքալու ըլլան նէ՝ չփնասուին: Երբեմն բերանը կը բացուէր խօսք մը ըսելու, բայց ձայն մը՝ խօսք մը դուրս չէր ելլէր: Աչքերը միշտ դիակներուն վրայ սեւեռած, գլուխը քարի փայտի և ո՛ր և ի՞նչ դիմացն ելած բաներուն կը զարնէր:

Կանանց ողբերն ու արանց անէծքները սաստկացան՝ երբոր Օրսոյի տան դիմացն հասան: Մանաւանդ տէլլա Ռէպպիաներուն կողմնակից հովիւներուն բերնէն յաղթանակի ձայն մը լսուածին պէս, թշնամիք չկրցան բարկութիւննին զսպել. և ոմանք վրէժխնդրութիւն, վրէժխնդրութիւն պողացին: Քարեր նետեցին, և երկու հրացան ալ պարպուեցաւ ան սրահին վրայ՝ ուր էին Աղանի և իր հիւրերը. գնտակները փեղկերուն մէջէն անցնելով՝ փայտի կտորներ ցատքեցուցին ստոյլի մը վրայ՝ որուն քով նստեր էին երկու օրիորդները: Լիւղիա սաստիկ պողաց վախէն, հպարապետը մէկէն հրացան մը ձեռք առաւ, իսկ Աղանի դուռը վազեց թափով ու բացաւ զայն. և հոն կեցած՝ ձեռքերը տարածելով թշնամիքն անիծելու համար, աղաղակեց.

— Վատ մարդիկ, կանանց՝ օտարա-

կանաց վրայ զէ՛նք կը պարպէք. Գորսի գացիք էք դուք, մարդիկ էք. ցած մարդիկ որ ետեւէն միայն սպաննել գիտէք: Առաջ եկէք տեսնամ. ես մինակ եմ. եղբայրս հեռուն է. սպաննեցէք զիս, սպաննեցէք հիւրերս. ձեզի արժանի գործ է ատիկայ: . . . Չէք համարձակիր, որովհետեւ վատ էք, որովհետեւ գիտէք զրէժնիս առիւնք: Գացէք, գացէք կանանց պէս լացէք, և շնորհակալ եղիք մեզի որ ձեզմէ ալ ուրիշ արիւն չենք պահանջեր:

Աղանի ձայնն ու շարժումըն ահաւոր ու ազդող էր. բազմութիւնը զինքը տեսածին պէս՝ սարսափած ետ քաշուեցաւ. ինչպէս թէ ան չարագործ կախարդներէն մէկն ըլլար, որոնց վըրայօք ահարկու պատմութիւններ կը պատմուին Գորսիգայի մէջ ձմեռուան իրիկունները: Այս միջոցն յարմար առիթ սեպեցին գեղապետի փոխանորդը, գիւղական պահապանութեան զինուորըն ու քանի մը կանայք՝ երկու կողմին մէջ նետուելու. որովհետեւ տէլլա Ռէպպիաներուն հովիւները զէնքերնին կը պատրաստէին և կը վախցուէր որ ընդհանուր կռիւ մը կը բացուի հրապարակին մէջ: Բայց երկու կողմի մեծերն ալ մէջտեղ չէին, և Գորսիգացիք շատ քիչ անգամ ձեռք ձեռքի կու գան իրենց քաղաքական պատերազմներուն զլխաւորաց հոն չեղած միջոցը: Թող որ Աղանի ալ տեսնելով որ խօսքով յաղթեց, չափու մէջ բռնեց իր մարդիկը. — Թողուցէք որ լան խեղճ մարդիկները, զուրցեց. թողուցէք որ ծերն իր միսը առնէ տանի: Ի՞նչ բանի կու գայ այդ ծեր աղուէն սպաննելը, որ ալ ակռայ չունի խածնելու: — Ճիւղտիչէ Պարրիչինի, յիշէ օգոստոսի Չը. յիշէ արիւնոտ գրապանակն որուն մէջ ստասաց ձեռքդ գրեց: Հայրս անոր մէջ քու մեզի տալու պարտքդ նշանակեր էր. որդիքդ վճարեցին զան: Ա՛լ հասուցմանդ մուրհակը կու տամ՝ քեզի, ծեր Պարրիչինի:

Աղանի թև թևի անցուցած և արհամարհոտ ժպիտով մը տեսաւ դիակ-

ներուն թշնամեաց տունը մտնալը . և երբ բազմութիւնը կամաց կամաց ցրուեցաւ, դուռը գոցեց, և սեղանատունը մտնալով՝ ըսաւ հազարապետին .

— Հայրենակցացս համար թողութիւն կը խնդրեմ քեզմէ . ոչ երբէք կրնայի կարծել որ Գորսիգացիք հրացան պարպեն տան մը վրայ՝ ուր օտարականք կան . իրենց տեղը ես քմթով մնացի :

Իրիկունը երբոր Նէվիլ օրիորդն իր սենեակը քաշուեցաւ, հազարապետը ներս մտաւ ու հարցուց թէ աղէկ չէր ըլլար որ վաղուրնէ ելլան երթան այդ գեղէն, ուր ամեն վայրկեան կրնար գնտակ մը մարդու գլուխն իջնալ, և որչափ կարելի է շուտով հեռանան այդ երկրէն՝ ուր մարդասպանութիւն և մատնութիւն միայն կը տեսնուէր :

Լիւդիա քիչ մը ատեն պատասխան չտուաւ . ետքը,

— Ի՞նչպէս կրնանք ձգել այս աղջիկն, ըսաւ, այն միջոցին որ միտնալով թեան կարօտ է : Մեր կողմէն անգլութիւն թիւն չէ՝ այս բանս, հայր իմ :

— Ես քեզի համար կը մտածեմ, զաւակս, պատասխանեց հազարապետը . թէ որ հիմա Այալչիոյի պանդոկն ըլլայիր, ապահով կ'ըլլայի ու չէի ուզեր այս անիծեալ կղզիէն ելլելու առանց կտրիճ տէլլա Ռէպպիային ձեռքը սըխմելու :

— Ուրեմն դեռ սպասենք, հայր իմ, և ան ատեն երթանք՝ երբոր ապահով ըլլանք որ չենք կրնար ծառայութիւն մը ընել իրենց :

— Ազնիւ սիրտ, զուրցեց հազարապետն՝ աղջրկան ճակատը պազնելով . կ'ախորժիմ որ ասանկ ինքզինքդ կը զոհես ուրիշներուն թշուառութիւնը դիւրացնելու համար : Կենանք ուրեմն . մարդս աղէկ գործողութեան մը վրայ ոչ երբէք կը զղջայ :

Լիւդիա չկրցաւ քուն ըլլալ . երբեմն ականջն եկած ձայները՝ տան վրայ յարձակման ձայներ կը կարծէր . երբեմն ալ վիրաւորելոյն վրայ կը մտածէր, որ հաւանականապէս զետնին վրայ պառ-

կած էր այն վայրկենին . և կը զարմանար միանգամայն անոր կտրըճութեանը վրայ : Ասանկ մտածմունքներով զբաղած՝ առաւօտեան դէմ սկսաւ քուն ըլլալ, և արեւը շատ բարձրացած էր՝ երբոր աչքը բացաւ : Դիմացը տեսաւ Աղանին, որ իր արթննալուն կը սպասէր :

— Շատ անհանգիստ եղած պիտի ըլլաս մեր տունը, զուրցեց Աղանի . վախեմ որ բնաւ քուն եղած չես :

— Լուր մը առիւր իրմէ, ազնիւ բարեկամահիս, հարցուց Լիւդիա :

— Այո, առիւ . բաւական աղէկ է : Ճիօգանդոյ այս առաւօտ ժամը չորսէն առաջ հոս եկաւ, և քեզի նամակ մը բերաւ . իսկ ինծի չէ գրած Օրսոյ : Կ'ըսէ թէ շատ նեղութիւն քաշեր է Օրսոյ գրելու . և թէպէտ Ճիօգանդոյ յանձն առեր է գրելու իրեն թելադրածը, բայց Օրսոյ չէ ուզած . կռնրկի վրայ պառկած գրեր է՝ կապարէ չգրելով . Պրանտուալչիոյ ալ թուղթը բռներ է : Եղբայրս միակերպ կ'ուզէ եղեր ելլել, և ու իցէ պզտիկ շարժմունքէն՝ անանկ դժնդակ ցաւեր կը զգայ եղեր թեւը, որ սիրտ շարժելու բան էր կ'ըսէ Ճիօգանդոյ : Ահաւասիկ իր նամակը :

Նէվիլ օրիորդը կարդաց նամակն, որ անգղիարէն գրուած էր, և էր հետեւեալը .

« Օրիորդդ,

Ձախող պատահարի մը մէջ ինկայ . ո՞ր գիտէ ինչ պիտի ըսեն թշնամիքս, ինչ զրպարտութիւններ պիտի բարդեն վրաս . բայց անոնք հոգս չեն : Զքեզ տեսնելէս վերջը սնոտի ակնկալութիւն մը ծներ էր սրտիս մէջ . բայց ներկայ դէպքս աներևութացուց այն երազը . կը տեսնեմ աչքիս առջևն իմ ապագաս, և աչքս առած եմ : Ա՛յ չեմ համարձակիր քովս պահելու ինծի տուած մատնիդ . Աղանի կը դարձնէ քեզի զանկայ : Ողջմբ մնա . դու կ'երթաս Գորսիգայէն, և ալ չենք տեսնուիր իրարու հետ . բայց ըսէ քրոջս որ ես քու համարմանդ արժանի եմ :

Օ. Տ. Ռ. »

Աղանի դարձուց մատնին Լիւդիոյ, և անոր անկողնին վրայ նստելով, — Անտարակոյս եղբօրս կը պատասխանես, ըսաւ : Նամակն երբոր հասաւ՝ մտածեցի որ արթնցնեմ զքեզ, բայց չհամարձակեցայ :

— Գէշ ըրեր որ չարթնցուցիր :

— Բայց հիմա ալ չեմ կրնար նամակ խրկել . գաւառապետը հասաւ հոս , և իրեն ծառաները բռներ են Բիէզըրանէրան . տեսնենք վերջը կրնանք յաջող ցընել : Ո՛հ , թէ որ ճանչնայիր եղբայրս . . . ազնիւ ու կտրիճ . նայէ ըրածը , մէկ հոգի երկու հոգւոյ դէմ և վիրաւորուած :

Գաւառապետն իրօք գեղապետի փոխանորդին խրկած մարդէն լսելով եղածը , եկեր էր Բիէզըրանէրա զինուորեն , բու հետ , և թագաւորական գործակատարն , անոր ատենադպիրն և այլն՝ մէկ տեղ առած , որպէս զի քննութիւնը նեն այս արիւնահեղութեան վրայ , որ Բիէզըրանէրայի հակառակորդ ազգատոհմից թշնամութեանը վախճան տուեր էր : Գաւառապետը մէկէն տեսնուեցաւ Նէվիլ հազարապետին և անոր աղջկանն հետ , և վախ ցուցուց անոնց որ բանին ծայրը գէշի պիտի ելլէր : — Գիտէք , զուրցեց , որ կռուին վկայ չկայ , և երկու մեռեալ երիտասարդաց ճարտարութեանն ու կտրուածութեանը վրայ անանկ համոզուած են ամենքը , որ ոչ ոք կը հաւատայ որ Պ . տէլլա Ռէպպիա կըցած ըլլայ սպաննել զանոնք առանց աւազակներուն օգնականութեանը , որոնց քովը կ'ըսուի թէ ապաւինած է :

— Մնկարելի է , աղաղակեց հազարապետը . Օրսոյ տէլլա Ռէպպիա պատուաւոր երիտասարդ մըն է , ես երաշխաւոր կ'ըլլամ :

— Ես ալ կը հաւատամ որ անանկ է , պատասխանեց գաւառապետը . սակայն թագաւորական գործակատարը (այս տեսակ անձինք միշտ կասկածոտ են) շատ համոզուած չէ : Իրեն ձեռքը նամակ մը կայ , որ ձեր բարեկամին ֆեսասակար է . այդ սպառնալից նամակը Օրսոյ Օւլանտուչիոյի զրած է , որուն մէջ տեղ մը կ'որոշէ անոր . . . այս տեղւոյ որոշմունքը՝ որոգայթ մըն է կ'ըսէ արքունի գործակատարը :

— Մանաւանդ թէ Օւլանտուչիոյ յանձն չէ առած հետը մենամարտելու , ըսաւ հազարապետը :

— Հոս անանկ սովորութիւն չկայ . զարանի կը մտնեն , և ետեէն կը սպաննեն զիրար . այս է հոս տեղի սովորոյթը : Կայ Պ . տէլլա Ռէպպիայի կողմնալ վկայութիւն մը . աղջիկ մը որ կը հաստատէ թէ չորս հրացանի հարուած լսեր է , որոնց վերջի երկուքն առջիններէն աւելի սաստկածայն և Պ . Օրսոյի հրացանին հարուածներն էին : Դժբաղդաբար այս աղջիկն այն աւազակներուն մէկուն ազգականն է , որոնք զաւակից սեպուած են . որով անոնցմէ տուն առած կը սեպուի :

— Պարոն , զուրցեց Լիւդիա , մենք ճամբան էինք երբ հրացանի հարուածները պարպուեցան , և մենք ալ նոյն պէս լսեցինք :

— Իրաւ կ'ըսէք . այս աղէկ բան է : Դու ալ , Պ . հազարապետ , նոյն բանը զիտեցիր արդեօք :

— Այո , պատասխանեց Նէվիլ օրիորդը . հայրս , որ աղէկ վարժութիւն ունի զէնքի , ըսաւ ինծի . Ահաւասիկ Պ . տէլլա Ռէպպիան իմ հրացանս կը պարպէ :

— Եւ այդ ձեր ըսած հարուածները ետքիններն էին :

— Այո , ետքինները . անանկ չէ , հայր իմ :

Հայրը շատ յիշողութիւն չունէր . բայց ու իցէ առթի մէջ աղջկանը խօսքը սուտ չէր հանէր :

— Մէկէն այս բանս պատմելու է արքունի գործակատարին , Պ . հազարապետ : Արդէն այս իրիկուն վիրաբոյժ մը պիտի գայ որ դիակները զննելով ստուգէ թէ վէրքերն յիշեալ զէնքովն եղած են :

— Ես տուի զանիկայ Օրսոյի , ըսաւ հազարապետը , երանի թէ ծովուն տակ կը գացած ըլլար . . . Բայց չէ , չէ . շատ գոհ եմ որ խեղճ տղուն ձեռքն է եղեր անիկայ . ապա թէ ոչ , առանց իմ հրացանիս չեմ գիտեր ինչպէս կ'ազատէր փորձանքէն :

Կը շարունակուի :